

**ԱՐՑԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԲԱՌԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

Ռենա Մովսեսյան

Բանալի բառեր՝ ծագումնաբանական դասակարգում, լեզվամտածողություն, բառապաշար, բարբառային շերտեր, բներանգ, ոճական-արտահայտչական միջոց, փոխառություններ, բնիկ հայերեն, հնդեվրոպական, գեղարվեստական գրականություն:

Հայ գրական լեզվի բառապաշարը հարստանում է բարբառների ու ժողովրդական լեզվի բառերի, իրողությունների իրացման շնորհիվ: Այդ գործընթացում բոլոր ժամանակներում էլ մեծ դեր է ունեցել գեղարվեստական գրականությունը:

Բարբառների հարուստ գանձարանից օգտվել են հայ դասական գրողներ Աբովյանը, Պռոշյանը, Աղայանը, Րաֆֆին, Մուրացանը, Թումանյանը, Իսահակյանը, Բակունցը, Շիրազը, Սահյանը և այլք, ովքեր մեծ ավանդ ունեն բարբառի միջոցով գրական լեզվի հարստացման գործում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր էլ բարբառները հայոց գրական լեզվի բառապաշարի հարստացման աղբյուր են ծառայում, ինչին մեծապես նպաստում են ժամանակակից գրողներն ու բանաստեղծները: Ժամանակակից գրողների մեծ մասն այս կամ այն չափով օգտվում է հայերենի բառապաշարի խոսակցական և բարբառային շերտերից՝ հերոսներին անհատականացնելու, տեղական բներանգ ստեղծելու, տվյալ ժողովրդի լեզվամտածողության և հոգեբանության ինքնատիպությունը ցույց տալու և ոճական-արտահայտչական այլևայլ նպատակներով՝ գեղարվեստական խոսքին հաղորդելով աշխուժություն, կենդանություն, հարազատություն և անմիջականություն: Գեղարվեստական խոսքի վարպետները, բարբառային բառաշերտի հաշվին ընդլայնելով իրենց բառընտրության ասպարեզը, նպաստում են գրական լեզվի զարգացմանը: Բարբառի հարուստ բառապաշարի օգտագործման բազում օրինակների կարելի է հանդիպել Արցախի գրողներ Մաքսիմ Հովհաննիսյանի, Վարդան Հակոբյանի, Արտաշես Ղահրիյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Վազգեն Օվյանի, Համլետ Մարտիրոսյանի, Սարգիս Աբրահամյանի, Սուկրատ Խանյանի, Նորայր Ավետիսյանի, Հրաչյա Բեգլարյանի և այլոց ստեղծագործություններում:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն ծագումնաբանական բազմազանություն: Դրանց մեջ մեծ է և՛ բնիկ բառերի (հնդեվրոպական հիմք լեզվից ավանդված), և՛ փոխառությունների թիվը: Բնիկ հայերեն բառերը կազմում են թե՛ գրական հայերենի, թե՛ նրա բոլոր տարբերակների բառապաշարի միջուկը, հիմնաշերտը:

Հատկանշական է, որ Արցախի և Ջանգեզուրի գրողների ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն հնդեվրոպական ծագման այն միավորները, որոնք վկայված չեն հայերենի գրավոր հուշարձաններում, բայց առկա են հայերենի քիչ թվով բարբառներում, այդ թվում՝ Ղարաբաղի բարբառում: Այդպիսի միա-

* Հոդվածն ընդունվել է 28.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

վորներ են **կեփ** (գրբ. գաբ, հ.ե. *ghabh*) - գ., 1. կարթանման երկձյուղ փայտիկ, որ կապում են թակի՝ պարանի մի ծայրին, իսկ մյուս ծայրն անցկացնելով դրա միջով՝ բեռը պրկում, 2. գիստ, ազդր, **կռոճ** (գրբ. գռիճ) – 1. շաքարի, քարաղի և այլնի ամբողջական կտոր, գուղձ, 2. փխբ. ամրակազմ **հեռ** (գրբ. եռ) – 1. եռալը, 2. ցավ, կսկիծ , **դորթ** (գրբ. ուղղորդ, դորդ) - ած. ճիշտ, ճշմարիտ **ճիթ** (հ.ե. *gei*) -մեկ ցողունի վրա աճած պտուղների ամբողջություն, ողկույզ . **պող** (վառվող կրակ կտրած ածուխ) **տալ** (հ.ե. *dhel*) ձյուղ, **տավար** (գրբ. տուար, հ.ե. *dip-ro*) – 1. խոշոր եղջերավոր ընտանի կենդանիներ, 2. փխբ. հիմար, ապուշ, տխմար մարդ և այլն:

Գեղարվեստական ստեղծագործություններում այդ բառային միավորները անփոխարինելի են իրենց իմաստային - գործառական բեռնվածքով: Եվ եթե բնագրում փորձենք դրանք փոխարինել համապատասխան գրական համարժեքներով, ապա կխամրեն միջավայրի զգացողությունը, խոսքի բնականությունը, կկորչեն նկարագրության տիպականությունը, բներանգային առանձնահատկությունները: Ինչպես՝

1. Ի՞նչ ես կեփեղդ բաց արել, բա դու սկի ամոթ չունե՞ս: [1]- Ի՞նչ ես ազդրեղդ բաց արել, բա դու սկի ամոթ չունե՞ս:
2. Մարդ է, մի քանի կռոճ կիր է ուզում: [2]-- Մարդ է, մի քանի գուղձ կիր է ուզում:
3. Մի քիչ քներ, մեջքը մի քիչ ձգվեր, ճաք-ճաք ձեռքերի հեռը մեղմանար: [3]-- Մի քիչ քներ, մեջքը մի քիչ ձգվեր, ճաք-ճաք ձեռքերի կսկիծը մեղմանար:
4. - Վա՛յ, դորթ ես ասո՛ւմ,-ծնկներին զարկելով հարցրեց Աթազ աքիրը: [4]-- - Վա՛յ, ձիշտ ես ասո՛ւմ,-ծնկներին զարկելով հարցրեց Աթազ աքիրը:
5. Մի ճիթ խաղող բարձրացել էր գլխից վեր: [5],- Մի ողկույզ խաղող բարձրացել էր գլխից վեր:
6. Գոնե լուսացույցը, որ մթան մեջ պողի էր նման, շուտ կանաչեր: [6]– Գոնե լուսացույցը, որ մթան մեջ վառվող ածուխի էր նման, շուտ կանաչեր:
7. Երկու դյուցազուն ծառեր՝ ճղատարած ու հզոր, ամեն մի տալը մի ծառ: [7]- Երկու դյուցազուն ծառեր՝ ճղատարած ու հզոր, ամեն ձյուղը մի ծառ:
8. Անհատական տավարը պահելու հերթը եկավ՝ կամ Լուսիկի հետ ինքն է գնալու, կամ՝ մերոնցից մեկը: [8] -- Անհատական կովը պահելու հերթը եկավ՝ կամ Լուսիկի հետ ինքն է գնալու, կամ՝ մերոնցից մեկը:

Բնականաբար լեզվի բառապաշարն արտացոլում է այն կապերն ու հարաբերությունները, որ ունեցել է այդ լեզուն կրող ժողովուրդը՝ այլ ժողովուրդների հետ իր զարգացման ընթացքում: «Լեզվի բառապաշարը իրոք մի հայելի է, որը պարզորոշ ցույց է տալիս, թե այս կամ այն ժողովուրդը երբ, ինչ ժողովուրդների հետ, ինչպիսի կապեր ու հարաբերություններ է ունեցել և համապատասխանաբար էլ նրանց լեզուներից ինչ և ինչքան բառեր է փոխառել» [9]:

Բարբառային փոխառությունների մեծ մասը թեպետ չի մտնում գրական լեզվի բառապաշարի մեջ, բայց հայոց լեզվի բառային կազմի կարևոր ու անհրաժեշտ մասն է կազմում: «Հաճախ նույնիսկ ոչ դժվար, այլ և անհնարին է լինում այդ կարգի բառերի փոխարինումը գրական համապատասխան հոմանիշներով»: [10]

Պատմական զարգացման ընթացքում Ղարաբաղի բարբառի բառապաշարի հարստացման արտաքին աղբյուր են հանդիսացել հիմնականում արևելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, թուրքական լեզուներ) և ռուսերենի բառապաշարը: Բարբառը ոչ մեծ թվով փոխառություններ է կատարել նաև վրացերենից:

Արցախի գրողների ստեղծագործություններում բառապաշարի այդ շերտը ակտիվ կենսունակությամբ դրսևորվել է: Փոխառողն, անշուշտ, բարբառն է եղել, իսկ գրողների նպատակը ժամանակաշրջանի ժողովրդական խոսքն ու մտածողությունը

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ընթերցողին ներկայացնելն է: Այս առումով հատկանշական է Ռ. Իշխանյանի նկատառումը. «Պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից և այն փոխառությունը, որը ոչ թե գրողը, այլ բարբառն է կատարել»: [11]

Խորհրդային շրջանում ռուսերենի կիրառությունը լայն շրջանառություն էր գտել նաև Արցախի բարբառում: Դա է պատճառը, որ խորհրդային և հետխորհրդային շրջանի Արցախի գրականության մեջ գործածվել են ռուսերենից և ռուսերենի միջոցով եվրոպական այլ լեզուներից կատարված մեծ թվով բարբառային փոխառություններ, որոնք իրենց քանակով գերազանցում են մնացած բոլոր լեզուներից կատարված փոխառություններին: Ստորև ներկայացնենք դրանց մի մասը.

Օրինակ՝ Գրաֆիմի օդին վերջանալուց հետո սեղանի վրա երևաց «չետվերտ» գինի: [12] Հայկազ Նավասարդյանը հարյուր տարի կապի թաղաքում, հարյուր զույգ սապոգներ ու կիտելներ կմաշի: [13] Իսկ դու ինչո՞ւ ես քառ Սարիբեկին մատերայի նյութ տալիս: [14] Չէ հա՛ք քնել են, մտել են պաղվալները, խոսեց կողքից քայլողը: [15] Բայց իրենց բաժին խանութներն են կրակ տվել, որպեսզի Արմիկի Անաիդան ռուսերեն ձևով հայերեն ասի ռեֆիցիտ: [16] Վեշերը թողեք, առայժմս մաշինում մնա: [17]

Ինչպես երևում է օրինակներից, գրողները, հերոսների լեզվի տիպիկ բնութագրության համար օգտագործում են մեծ թվով ռուսերեն բառեր, որոնք երբեմն ներկայացվում են բառի գծագրական պատկերի ամբողջական խեղաթյուրմամբ՝ այնպես, ինչպես գործածում է ժողովուրդը:

Լ. Մարգարյանը, ուսումնասիրելով Արցախի բանահյուսության լեզվի բառապաշարի ծագումնաբանական շերտերը, նշում է, որ արևելյան լեզուներից կատարած փոխառությունները քանակով գերազանցում են ռուսական փոխառություններին: Պատկերն այդպիսին է նույնիսկ նորագիր բանահյուսական նմուշներում. «Թվում է՝ նորագիր բանահյուսական նմուշներում պետք է նկատվեր ռուսերեն փոխառությունների կտրուկ աճ՝ պայմանավորված վերջին տասնամյակներում բարբառ ներհոսած ռուսերեն բառերի մեծաքանակությամբ: Սակայն ուսումնասիրությունն այլ բան է պարզում: Եվ սա կարելի է բացատրել նրանով, որ բանասացները ավագ սերնդի ներկայացուցիչներ են, իսկ բանահավաքները բանահյուսական նմուշ փոխադրելիս նախանձախնդիր են նմուշի «բնօրինակային» առանձնահատկությունները պահպանելուն»: [18]

Գեղարվեստական գրականության պարագայում գրողի նախանձախնդրությունն ուղղված է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդի լեզվամտածողությունը ճիշտ ներկայացնելուն: Մեր կարծիքով՝ դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանահյուսական լեզվի, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության լեզվի բառապաշարը հարուստ է ռուսերենից կատարած բարբառային փոխառություններով:

Սակայն արևելյան լեզուներից կատարած փոխառությունները ևս մեծ թիվ են կազմում խնդրո առարկա ստեղծագործություններում: Ստորև ներկայացնենք դրանց մի մասը.

Թուրքական փոխառություններ. Օրինակ՝ Աղասու աչքում հանկարծ կայծ կառներ «ինձ մի՛ գժվացրու» խոսքը, որից ինքն այնպես պուճախ էր քաշվում: [19] Առ, է՛, հողս քու էդ արսրզ գլխին: [20] Իր ցեղի տղամարդիկ ուժեղ են լինում ու սարք: [21]- Ինչո՞ւ ես ծիծաղում,-հարցնում եմ: -Դու,-ասում է,- մազալու տղա ես: [22] Երամիշ, Երամիշ... թուրք Երամիշ, գլուխը եմիշ, կրկնում են մի պահ իմ գյուտից սփոփված: [23]

Արևելյան այլ լեզուներից (պրսկ, արաբ.) կատարած փոխառություններ. Հայկազը էշի վրայից փալանը վերցրեց, ծառից երկար կապեց: [24] Որ անմիջապես կարող է փոխվել նեղմիտ ու լաչառ կռվարարության, որին էլ հենց ծարավ են լինում Սաթենի-

կի նման կանացի հոգիները: [25] Մարդ ուղարկեցի մեր մութրուք նախագահի հետևից: [26] Իսկ ամենացավալին ինձ համար ծնոտը կախ քալաթու կլկոցն էր: [27] Մուշեղ ապա, այ քալիուռ, ոնց որ պասկվելուց հետո ջահելացել ես: [28]

Հետաքրքրական է, որ ծագումով փոխառյալ մի շարք բառեր բարբառում և մեր օրինակներում գործածվում են փոխատու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող նոր իմաստով, մի շարք բառեր էլ զուգահեռաբար պահում են նաև փոխատու լեզվի իմաստը: Օրինակ՝

քիլինկյոշ (քիլինգշյօ շ'քլըլընգյօշ) (պրսկ. kəl) բառը փոխատու լեզվում ունի «եռացրած» իմաստը, իսկ բարբառում՝ «կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով»: Ինչպես՝ Քիլինկյոշ ... Կարո՞ղ ես եփել: Սիբիրում այնքան եմ հիշել մայրիկի եփած կերակուրները: [29]

չանչախ (պրսկ. cakacak)–ը պարսկերենում ունի «դժան թակիչ» իմաստը, Ղարաբաղի բարբառում ունի հետևյալ իմաստները. 1 ջրաղացի կրիճակին ամրացված ու ծայրով ջրաղացքարի վրա ընկած փայտե շերտիկ, որի ցնցումները հաղորդվում են կրիճակին, և աղունը դանդաղորեն թափվում է քարի անցքի մեջ 2. փայտե հաստ ցից, որ խրում են գետնի մեջ, 3. փխբ. շատախոս մարդ : Մեր օրինակում այն գործածված է վերջին փոխաբերական իմաստով: Ինչպես՝ Գլուխը լուրջ-լուրջ տմբտմբացնում է չանչախ Բենիկը: [30]

փանջաք (փա ՚նջա ՚նք)/փա ՚նջաք/փանջակ (պրսկ. --- / բառը փոխատու լեզվում գործածվում է «ծեռքի թաթ» իմաստով, բարբառում այն ունի «մի ձեռքով՝ բռով տանելու չափով քանակություն (խոտի, հացաբույսի և այլն)» և «տասը կամ քսան խուրձից - բաղկացած փոքրիկ դեզ» իմաստները: Ինչպես՝ Լավ, ի՞նչ անենք, թե օրական վեց - փանջաք հունձ ես անում: [31]

շաբաշ (պրսկ. sabas - կեցցե՛, շա՛տ լավ) բառը բարբառում կիրառվում է «հարսանիքի՝ տոնախմբության և այլնի ժամանակ նվագողներին, պարողներին տրվող դրամական նվեր» իմաստով, ինչպես՝ Ինձ համար «Ջեյրամի» նվագիր, հիսուն ռուբլի շաբաշ եմ տալիս: [32]

Քավթար>քավթար-ը փոխատու պահլավերենի «բորենի» նշանակությամբ բարբառում չի գործածվում: Այն ստացել է «տգեղ, ծեր (ջաղու)» իմաստները և ունի ընդգծված բացասական երանգ: Ինչպես՝ Անամոթ, անամոթ քավթար կին է, բայց այնպես է զուգվում-զարդարվում, կարծես հարսատեսի է պատրաստվում...: [33]

խալաթ (արաբ. xəlat,) բառը փոխատու լեզվի «ընձա, նվեր» իմաստին զուգահեռ ունի «տանը կամ աշխատանքի վայրում հազնելու երկար վերնազգեստ» իմաստը, ինչպես՝ Սերիկ, այդ ինչո՞ւ է խալաթը սևացել: [34]

դալբ (արաբ. kalb) –ը փոխատու լեզվի «կեղծ, խարխլված» իմաստից բացի բարբառում կիրառվում է նաև «ծուլ, դանդաղաշարժ» իմաստով, ինչպես՝ Չէ՛, նա դալբ եզան նման է, որ խոտ տեսնելիս մոտ է վազում: [35]

Բարբառային փոխառությունների մի մասը արդեն մտել և շարունակում է մուտք գործել նախ՝ ժողովրդախոսակցական, ապա գրական բառապաշարի մեջ. այս գործընթացում մեծ է գորդների դերը, որովհետև, ինչպես Ա. Մարությանն է նշել. «Բարբառային բառերը, լինեն դրանք փոխառյալ թե բնիկ, օգտագործվելով գեղարվեստական գրականության մեջ, հղկվում, մշակվում, բարբառային կեղևից ազատվում են և գրական օրինականություն են ստանում՝ բարձրանալով գրական լեզվի աստիճանի»: [36]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օվյան Վ., Կապույտ տարիներ, Ստեփ., «Դիզակ պլուս» հրատ., 2007, էջ 306:
2. Նույն տեղում, էջ 332:
3. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփ., 2005, էջ 323:
4. Նույն տեղում, էջ 105:
5. Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփ., 2013, էջ 22:
6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն) Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1993, էջ 75:
7. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, էջ 229:
8. Նույն տեղում, էջ 317:
9. Մարգարյան Ա., նշվ.աշխ., էջ 148:
10. Մարության Ա., Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, «Սովետական գրող» հրատարակչություն, Եր., 1979, էջ 79:
11. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Եր., «Միտք» հրատ., 1965, էջ 91:
12. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, «Ամարաս» հրատարակչություն, Եր., 2008, էջ 431:
13. Օվյան Վ., Կապույտ տարիներ, էջ 71:
14. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, «Էդիտ պրինտ» հրատ., Եր., 2013, էջ 197:
15. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատարակչություն, Եր., 2007, էջ 61:
16. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, էջ 303:
17. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, էջ 74:
18. Մարգարյան Լ, Արցախի բանահյուսության լեզու, Ստեփ., «Դիզակ պլուս» հրատ., 2011, էջ 26:
19. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, էջ 138:
20. Օվյան Վ, Կապույտ տարիներ, էջ 270:
21. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, էջ 269:
22. Նույն տեղում, էջ 200:
23. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, էջ 67:
24. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 305:
25. Ղահրիյան Ա., Պատրանք, էջ 139:
26. Օվյան Վ., Կապույտ տարիներ, էջ 321:
27. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, էջ 73:
28. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 30:
29. Հակոբյան Վ., Ջատիկը ջրավազանի հատակին, Ստեփ., «Դիզակ պլուս» հրատ., 2010, էջ 379:
30. Օվյան Վ., Կապույտ տարիներ, էջ 31:
31. Նույն տեղում, էջ 232:
32. Հակոբյան Վ., Ջատիկը ջրավազանի հատակին, էջ 156:
33. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, էջ 173:
34. Հակոբյան Վ., Ջատիկը ջրավազանի հատակին, էջ 506:
35. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 108:
36. Մարության Ա., Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, էջ 81:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արցախի գրողների ստեղծագործությունների բարբառային բառերի ծագում-
նաբանությունը և իմաստային առանձնահատկությունները
Ռենա Մովսեսյան

Արցախի գրողներն իրենց գեղարվեստական երկերում օգտագործել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ բարբառային բառեր: Մեծ թիվ են կազմում ռուսական փոխառությունները: Քիչ չեն նաև արևելյան լեզուներից կատարված փոխառությունները: Մեծարժեք են բնիկ բարբառային բառերը, որոնք վկայված չեն հայերենի գրավոր հուշարձաններում, բայց առկա են հայերենի քիչ թվով բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում: Բարբառային ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ բառերը, մտել և շարունակում են մուտք գործել նախ՝ ժողովրդախոսակցական, ապա՝ գրական լեզվի բառապաշարի մեջ՝ հարստացնելով այն: Այդ գործընթացում մեծ է գեղարվեստական գրականության դերը:

РЕЗЮМЕ

Этимология и семантические особенности диалектных слов
в произведениях арцахских писателей

Рена Мовсесян

Ключевые слова: этимологическая классификация, языковое мышление, словарный запас, диалектные слоги, колорит, стилистические выразительные средства, заимствование, исконно-армянский, индоевропейский, художественная литература.

Арцахские писатели в своих художественных произведениях использовали как исконные диалектные (образованные от древнеармянского языка грабара и индоевропейского основного языка), так и заимствованные слова. Велико число диалектных заимствований из русского и европейских языков, немало также восточных заимствований, которым уступают место исходные диалектные слова.

Как исходные, так и заимствованные диалектные слова вошли в язык и обогатили, в первую очередь, разговорный, а затем литературный словарный запас. В этом большую роль сыграла художественная литература.

SUMMARY

Etymology and Semantic Features of Dialectal Words in Artsakh Writers' Works
Rena Movsesyan

Keywords: etymological classification, linguistic thinking, word stock, dialectal layers, colouring, stylistic expressive means, borrowing, native Armenian, Indo-European, fiction.

Artsakh writers have used both native dialectal words (derived from the ancient Armenian language Grabar and Indo-European original language) and loan words in their works. There is a great number of dialectal borrowings from Russian and European languages. The number of eastern borrowings is also large, it prevails the number of native dialectal words.

Both dialectal native and loan words entered and enriched colloquial and literary vocabulary. Fiction played a great role there.